ԱՐԹՈՒՆ ՄՆԱՑԵՔ ՈՒ ԱՂՈԹԵՔ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ՄԱՐԿՈՍ 13.33-37

33 Զգո՛յշ եղեք, արթո՛ւն մնացեք ու աղոթե՛ք, որովհետև չգիտեք, թե ժամանակը ե՞րբ է գալու: 34 Ինչպես այն մարդը (Հիսուսը), որ հեռու աշխարհ գնալիս իր տունը (եկեղեցին) կթողնի, իր ծառաներին (ձեզ) իշխանություն կտա, յուրաքանչյուրի համար իր գործը կսահմանի, իսկ դռնապանին (Հովվին) կհրամայի, որ արթուն մնա: 35 Արդ, արթո՛ւն կացեք, քանի որ չգիտեք, թե տանտերը (Հիսուսը) ե՞րբ կգա՝ երեկոյա՞ն, թե՞ կեսգիշերին, աքլորականչի՞ն, թե՞ առավոտյան: 36 Չլինի թե հանկարծակի գա և ձեզ քնած գտնի: Եվ ինչ որ ձեզ ասում եմ, բոլորին եմ ասում՝ արթո՛ւն կացեք:

- ***Այս հատվածում Հիսուսը չորս անգամ կոչ է անում արթուն մնալ:***
- ***Մատթեոս 25-ում տաս կույսերի առակը նշում է զգուշության և պատրաստ լինելու կարևորության մասին:***

*Մատ. 25 - 5 Եւ երբոր փեսան ուշացաւ, **ամենքը թմրեցին եւ քնեցին:** 6 Եւ կէս գիշերին աղաղակ եղաւ՝ Ահա փեսան գալիս է. դուրս եկէք նորան դիմավորելու: 10 Եւ երբոր նորանք գնացին գնելու, փեսան եկաւ. եւ պատրաստները նորա հետ հարսանիքը մտան, եւ դուռը փակվեց:*

Հայտ. 3.3 – Եթե արթուն չմնաս, գողի պես գալու եմ քո վրա, և բնավ չես իմանալու, թե որ ժամին եմ գալու քո վրա:

Հռ. 13.11 – Ժամանակի հետ կապված՝ սա՛ էլ իմացեք. արդեն քնից զարթնելու ժամն է, որովհետև այժմ փրկությունը մեզ ավելի մոտ է, քան այն ժամանակ, երբ հավատացինք:

I. ԱՐԹՈՒՆ ՄՆԱՑԵՔ ՈՒ ԱՂՈԹԵՔ:

Պողոս առաքյալը Եփեսացիներին գրում է հոգևոր պատերազմի մասին: Նա նկարագրում է Աստծո սպառազինությունը: Բայց շատերը մոռանում են այս հատվածի ավարտը.

«18 Ամեն աղօթքով եւ աղաչանքով աղօթք արէք ամեն ժամանակ Սուրբ Հոգով.»:

Այսօր ուզում եմ ձեզ հետ կիսվել այս կարևոր միտքը. ***Աստծո սպառազինությունը անբաժան է խորը աղոթքի կյանքից****:*

(1) ԱՂՈԹՔԸ ԶԻՆՎՈՐԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ՍՊԱՌԱԶԻՆՎԵԼՈՒ:

- *Աղոթքը հոգևոր զորավարժություն է:*
- *Առանց աղոթքի հավատացյալը մերկ է և խոցելի:*
- *Աղոթքն օգնում է մեզ գիտակցել մեր պատերազմի լրջությունը:*
  - *Մովսեսը բարձրացնում էր ձեռքերը աղոթքի մեջ և Իսրայելը հաղթում էր (Ելից 17):*
  - *Հեսուն չի բավարարվում կիսատ հաղթանակով: «Արեվ, կանգնի՛ր Գաբոնի վրա»:*
  - *Հովսափատը վախենում է, բայց դեմ է կանգնում Տիրոջ առաջ աղոթքով և ծոմով. ամբողջ ժողովուրդը հավաքվում է Տիրոջ առաջ:*

(2) ԱՂՈԹՔԸ ԶՈՐԱՑՆՈՒՄ Է ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ:

- *Պողոս ասում է. «Զորացեք Տիրոջով»:*
- *Զինվորն ամեն ինչ կարող է կրել, բայց եթե նա չունի հրամանատարի հետ կապը, չի իմանա երբ, ինչպես ու ում դեմ կռվել: Աղոթքը այդ կապն է՝ զորքի հրամանատարի հետ:*
- *Նախագահի «SITUATION ROOM» նման է եկեղեցում աղոթքի ծառայությանը:*
- *Առանց աղոթքի սպառազինությունը պարզապես ցուցադրական է:*

Ահա թե ինչու Հիսուսն ասաց. Զգո՛ւյշ եղեք, <u>արթո՛ւն մնացեք</u> ու աղոթե՛ք.

34 Ինչպես այն մարդը (Հիսուսը), որ հեռու աշխարհ գնալիս <u>իր տունը</u> (եկեղեցին) կթողնի, <u>իր ծառաներին</u> (ձեզ) իշխանություն կտա, յուրաքանչյուրի համար <u>իր գործը</u> կսահմանի.

II. ՏԵՐԸ ՄԵԶ ՍՊԱՌԱԶԻՆՈՒՄ Է ԱՂՈԹՔԻ ՄԻՋՈՑՈՎ և ՏԱԼԻՍ Է ԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

(1) ՏԵՐԸ ԳՆԱՑ, ԲԱՅՑ <u>ԻՐ</u> <u>ՏՈՒՆԸ</u> ՉԹՈՂԵՑ ԱՆՏԵՐ:

- *«Տունը» խորհրդանշում է Նրա թագավորությունը, եկեղեցին:*
- *Սուրբ Հոգին մեզ հետ է՝ հաստատելու այդ իշխանությունը:*

(2) <u>ԻՐ</u> <u>ԾԱՌԱՆԵՐԻՆ</u> ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ «EXOUSIA» ԿՏԱ:

- *Իշխանությունը մեր կարողությունը չէ, այլ Նա է տվել այն:*
- *Իշխանություն՝ Ավետարանի քարոզի, հիվանդներին բժշկելու, դևերին հանելու, մեղքին հաղթելու համար:*

  Մատթեոս 28.18-19. «Ինձ տրվեց ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա. Գնացեք…»

  Հիսուս ասում է՝ «Ձեզ իշխանություն եմ տալիս, որ օձերի ու կարիճների վրա գնաք և թշնամու բոլոր զորության վրա, և ոչինչ ձեզ չի վնասի» (Ղուկաս 10.19):

Նրա իշխանությունն է, որը գործում է մեզ միջոցով:

(3) «ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՀԱՄԱՐ <u>ԻՐ</u> <u>ԳՈՐԾԸ</u> ԿՍԱՀՄԱՆԻ»:

- *Յուրաքանչյուր ծառա ունի իր գործը. ամեն հավատացյալ կոչված է ծառա լինելու:*
- *Քո ծառայությունն յուրահատուկ է. Աստված տվել է քեզ հանձնարարություն:*

  Տերը իր ունեցվածքը վստահում է իր ծառաներին՝ «յուրաքանչյուրին իր կարողության չափով» (Մատթեոս 25.14-30 Առակ տաղանդների մասին): 5, 2, 1

Պետրոս.

- *Գօտիդ կապիր*
- *Հագիր հողաթափերդ ոտներիդ,*
- *Հանդերձներդ քեզ վրա գցիր եւ իմ ետեւից եկ:*

Աղոթք.

«Տեր Հիսուս, շնորհակալ եմ, որ դու ինձ իշխանություն ես տվել ծառայելու, հաղթելու և քո Թագավորությունը առաջ տանելու համար: Օգնի՛ր ինձ ճանաչելու իմ կանչը, լինելու արթուն և հավատարիմ՝ սպասելով քո գալստյանը: Ամեն»:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ